ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԴՈՒՅՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

Նախասովետական շրջանում նախնադարյան և ուրարտական հուշարձանների ուսումնասիրության ասպարեզում կատարված առաջին իսկ աշխատանքները (Ռեգկին լազերի, Ռոնակի, Շեյթան-դաղի, Մուսիերիի, Արմավիրի, Վանի և այլ հուշարձանների պեղումները) ցույց տվեցին, որ Հայկական լեռնաշխարհը մարդկային քաղաքակրթության հնագույն օջախներից է և լիովին արժանի է մանրազնին հնագիտական ուսումնասիրության։ Նշված հնավայրերը իրենց վրա բևեռեցին եվրոպական ու ռուսական խոշոր գիտնականների ուշադրությունը և նշանավոր հայտնագործությունների ու գիտական ակնառու ուսումնասիրությունների հիմք դարձան։ Այս է նախասովետական շրջանի հնագիտության դերն ու նշանակությունը, թեև հնագիտական աշխատանքները տարվում էին հիմնականում հնագիտական նյութերի կուտակման, նրանց նախասկզբնական ուսումնասիրության ուղղությամբ՝ պեղումների գիտատեխնիկական ոչ բարձր մակարդակով։ Հայաստանի հնագույն մշակույթի վերաբերյալ ընդհանրացնող աշխատությունների իրականացումն այս շրջանում անհնար էր ոչ միայն որակյալ կադրերի, համապատասխան գիտական հիմնարկների ու հասարակական կազմակերպությունների բացակայության հետևանքով, այլև այն պարզ պատճառով, որ հայ հնագիտությունը սաղմնային վիճակում էր։

Դրությունն արմատապես փոխվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, երբ հիմնադրվեցին Երևանի պետական համալսարանը (1921), պետական պատմական թանգարանը (1921) և հնությունների պահպանության կոմիտեն (1923), որոնք ծրագրված, տևական, լայնահուն գիտական աշխատանք ծավալեցին Հայաստանի հին մշակույթի ուսումնասիրության ասպարեզում։

Շուրջ 50 տարում ուսումնասիրվեցին Հայաստանի նախասկզբնական պատմության ժամանակաշրջանի բազմաթիվ այրեր, կացարաններ, բնակատեղիներ, դամբարանադաշտեր, ամրոցներ, որոնք վերաբերում են հին և նոր քարե դարերին, պղնձաքարեդարյան ժամանակաշրջանին, բրոնզի ու երկաթի դարաշրջաններին և Ուրարտուին։

Քարե դարի առաջին կարևորագույն հուշարձանները (Արտին լեռան ստորոտ) հայտնի դարձան տակավին XIX դ. վերջին՝ ֆրանսիացի հնագետ Ժակ դը Մորգանի հետախուզական շրջագայությունների շնորհիվ։ Հետագայում Արագածոտնի այս նշանավոր հնավայրերը բազմիցս ուսումնասիրվեցին ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի, ՍՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտի և Լենինգրադի պետական էրմիտաժի արշավախմբերի կողմից (Ս. Զամյատնին, Մ. Պա-

Նիչկինա, Ս. Սարդարյան)[1], ի հայտ բերվեցին բազմաթիվ նոր կայաններ և հին քարե դարի ստորին կամ վաղ փուլի մինչ այդ անհայտ հարուստ նյութեր։ 1930—1950-ական թվականներին ուսումնասիրվեցին ևս մի քանի հին քարե դարի կայաններ Հրազդանի ձախափնյա դարավանդում՝ Արզնիի մոտ (Ա. Դեմյոխին, Ե. Բայրուրդյան), Ջրաբեր գյուղի շրջակայքում (Ս. Բալյան, Վ. Լյուբին) և այլուր։ Կատարված աշխատանքների շնորհիվ հաստատվեց Հայաստանի անընդմեջ բնակեցվածության փաստը՝ ստորին քարե դարից մինչև նոր քարե դար։ Խիստ նախնական թվագրման ու դասակարգման ենթարկվեցին հին քարեդարյան նյութերի բազմաթիվ հավաքածուներ, մասամբ քննարկվեցին «նախնադարյան հորդայի» գոյատևման տնտեսական և հասարակական հիմունքները, փորձ արվեց հաստատելու Հայաստանի մշակույթի տեղը, դերն ու նշանակությունը Առաջավոր Ասիայի, Արևելյան Միջերկրականի, Կովկասի ու Հարավ-Ռուսական տափաստանի հին մշակույթների շարքում։ Հին քարեդարյան գործիքների խմբեր հայտնաբերվեցին նաև Արևմտյան Հայաստանի Կարսի, Բուլանըղի, Խարբերդի, Մալաթիայի շրջաններում, Արածանիի հովտում, Սասնա լեռների ու Հայկական Տավրոսի փեշերին։ Այդ նյութերի ուսումնասիրությամբ պարզվեց, որ հին քարե դարի պատմական հուշարձանները տարածված են ողջ Հայկական լեռնաշխարհում, որը քարեդարյան մշակույթի ինքնուրույն և խոշոր օջախներից մեկն է[2]։ Ցավոք, հին քարեդարյան կայանների ուսումնասիրման ընթացքը 1950-ական թվականներին խիստ դանդաղեց և առաջադրված գիտական խնդիրների մեծ մասը համապատասխան լուծում չստացավ՝ ինչպես բարձրորակ տեղական կադրերի սակավության, այնպես էլ ուսումնասիրված հուշարձանների վատթար վիճակի հետևանքով։ Բավական է նշել, որ վերը թվարկված բոլոր կայաններից հավաքված է վերգետնյա նյութ, որը չի կապվում որոշակի հնագիտական-երկրաբանական շերտագրության, հնէաբանական, հնէակենդանաբանական, հնէաբուսական նյութերի կազմակերպված-պահպանված կայուն բնակատեղիի նյութա-կենցաղային մնացորդների հետ։ Հասկանալի է, որ նման հիմքի վրա դժվար էր կառուցել հուշարձանների պատճառաբանված գիտական պարբերացում, ժամանակագրական սանդղակներ, պատշաճ մակարդակի հասցնել էկոլոգիայի, պալեոկլիմայական պայմանների, համայնքի ներքին զարգացման օրինաչափությունների ուսումնասիրությունը։ Վերջին հինգ տարվա ընթացքում Հայաստանի քարայրներն ու ժայռապատկերներն ուսումնասիրող արշավախումբը (արշավախմբի պետ՝ Հ. Մարտիրոսյան, անդամներ՝ Կ. Կարապետյան, Ս. Մեժլումյան, Բ. Երիցյան, Հ. Ազիզյան) Հրազդանի միջին և վերին հոսանքների անդեզիտ-բազալտի բնական խորշերում ու ծածկերի տակ հայտնաբերեց հին քարե դարի ստորին փուլին պատկանող մի քանի կայաններ, որոնք նախկիններից տարբերվում են որոշակի բազմաշերտ նստվածքներով, օջախների, հնէակենդանաբանական, բուսական հարուստ մնացորդներով և ժամանակագրական, էկոլոգիական, բնակլիմայական պայմանների ուսումնասիրության լայն հնարավորություններ են

---

[1] М. З. Паничкина, Палеолит Армении, Л., 1950; С. А. Сардарян, Палеолит в Армении, Ереван, 1954, «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան, 1971, էջ 60—85։

[2] В. П. Любин, Палеолит Турции и проблема раннего расселения человечества («Советская археология», 1957, № 27, стр. 71—96).

ընձեռում։ Սրանք համառ ու տքնաջան աշխատանքով հին քարեդարյան մշակույթի ուսումնասիրությունը կարող են բարձրացնել մի նոր մակարդակի։ Այս աշխատանքները հույս են ներշնչում, որ Հայաստանի քարայրներում կհայտնաբերվեն կապկամարդու, պալեոանթրոպի և բրածո մարդու այլ տիպերի մնացորդներ, որոնք արդեն հայտնի են հարավային Վրաստանից (ուդաբնոպիտեկ). Լեռնային Ղարաբաղից (հնագույն նեանդերթալցի, Ազոխի քարայր), Շանիդարից (նեանդերթալցիների տարբեր սերունդներ), վերջինս գտնվում է Զագրոսի լեռներում՝ Հայկական լեռնաշխարհի ծայր հարավ-արևելքում։ Մարդաբանական այս հայտնագործությունների, ինչպես նաև երրորդական ու վաղ չորրորդական երկրաբանության, հնէամարդաբանական, հնէաբուսաբանական և հնէակենդանաբանական բոլոր տվյալների համաձայն Հայկական լեռնաշխարհը հանդիսանում է նախամարդու ծագման, կազմավորման, մարդկային անդրանիկ հասարակական բջիջների ձևավորման նախնական խոշոր բնօրրաններից մեկը, որն առանձնապես զգալի դեր խաղաց Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի վաղագույն ցեղերի տարաբնակեցման հանգուցակետում։ Պատմագիտական համընդհանուր նշանակություն ունեցող այս պրոբլեմից բխում են երկու ոչ պակաս կարևոր ենթապրոբլեմներ, որոնք պայմանավորված են Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքով. ա) Հայկական լեռնաշխարհի հին քարեդարյան կայաններից շատերը տեղադրված են այնպիսի ծայրամասային կետերում, որոնք հարում են Առաջավոր և Փոքր Ասիայի, Արևելյան Միջերկրականի, Կովկասի շրջաններին և նրանց հետ կապվում են գետահովիտներով, լեռնանցքներով, կիրճերով։ Իրաքի, Իրանի և Տավրոսի լեռնանցքներում, Արածանիի ավազանում, Ասորիք-Պաղեստինում, Վրաստանում, Ադրբեջանում և Հյուսիսային Կովկասում այժմ հայտնի են բազմաթիվ կայաններ, որոնք իրենց նյութերով զգալիորեն մերձենում են Հայաստանի հին քարեդարյան հավաքածոներին։ Այս նյութերի մանրազնին համեմատական ուսումնասիրության եղանակով միայն կարելի է ճշտել մարդկային վաղ կոլեկտիվների տարաբնակեցման ուղիները, որ զգալի նշանակություն կունենա Մերձավոր Արևելքի, Կովկասի և Հարավ-Ռուսական տափաստանի հին քարեդարյան մշակույթի դենեզիսի պարզաբանման հարցում։

բ) Մարդկային վաղ կոլեկտիվների, առանձնապես նեանդերթալցիների տարաբնակեցման ու շարժումների հետ է կապված նրանց խաչաձևումը, մարդաբանական զարգացումը, որ նույնպես կարող էր տեղի ունեցած լինել Հայաստանի տարածքում՝ մի կողմից շանիդարյան տիպի նեանդերթալցիների և մյուս կողմից արևմտյան նեանդերթալցիների միջև, որ հայտնի են Պաղեստինի Մուղարեթ-էլ Զութիի քարայրից, Քարմել լեռան «Քարայրների հովտից», Տաբուն և Սխուլ այրերից, Կաֆզեխի, Շուկրոզի և Վադի-էլ Ամուդի քարանձավներից։

Այս պրոբլեմների լուծման համար անհրաժեշտ է պատրաստել բազմակողմանի զարգացած հնագետներ՝ ընդգրկելով չորրորդական երկրաբանության և աշխարհագրության, բնական ու տեխնիկական գիտությունների բազմաթիվ

---

3 Հ. Ա. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 3), Б. Г. Ерицян, Ереванская пещерная стоянка и ее место среди древнейших памятников Кавказа (автореферат кандидатской диссертации), М., 1970.

այլ մասնագետների։ Սակայն նյութերի և պրոբլեմների այսպիսի առատության պայմաններում ՀՍՍՀ ԳԱ հնագիտության ինստիտուտը չունի նույնիսկ այդ հարցերով հետաքրքրվող մասնագետների խումբ և զգալիորեն ետ է մնում ոչ միայն ՍՍՀՄ կենտրոնական գիտահետազոտական հիմնարկներից, այլև նույնիսկ մեր հարևան հանրապետություններից։ Հետևաբար, անհրաժեշտ է, գոնե ուշացած, ձեռնամուխ լինել հին քարե դարի ուսումնասիրության գիտական կազմակերպմանը։

Ավելի անմխիթար վիճակում է նոր քարեդարյան հուշարձանների ուսումնասիրության գործը։ Սատանի դարի հին քարեդարյան կայաններին կից վաղ նոր քարե դարի արհեստանոց-բնակավայրային նյութերը հրատարակված չեն և շարունակում են մնալ անմշակ։ Նոյեմբերյանի շրջանում վերջերս նշմարված ուշ նոր քարեդարյան հետաքրքիր կայանը դեռևս հիմնավոր չի ուսումնասիրվել։ Արարատյան դաշտում նշմարված «Տերտերի ձորի», «Աղվեսի բների», «Կղզյակ-բլուրի» հասակը, պատկանելությունն ու բնույթը լիովին պարզված չեն, քանի որ դրանք շոշափված են միայն հետախուզական հորատանցքերի միջոցով[4]։ Դեռևս որոշակի և ստույգ չեն նաև այդ հուշարձանների կապերը հուսալի թվագրություն ունեցող արևելյան այնպիսի հուշարձանների հետ, ինչպիսիք են Յումուք-Թեփեն, Հաջիլարն ու Ցաթալ-Հույուքը, Ջարմոն և Հասունան, մինչդեռ նախնադարյան մշակույթի զարգացման նոր քարեդարյան փուլը մեծ կարևորություն ունի իբրև հավաքչությունից ու որսորդությունից կազմակերպված անասնապահության ու երկրագործության անցնելու հուժկու աստիճան։ Այս անցման նշանակությունն այնքան մեծ է, որ այն ստացել է «նոր քարեդարյան հեղափոխություն» անունը և առանձին ուսումնասիրության խոշոր պրոբլեմ է հայտարարված։

Վերջին տարիների ընթացքում առանձնապես աշխույժ հետախուզության առարկա դարձան ուշ նոր քարեդարյան և պղնձաքարեդարյան (մ. թ. ա. VI—IV հազարամյակներ) բնակավայրերը։ Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածում Անկարայի բրիտանական ինստիտուտի աշխատանքներով ի հայտ բերվեցին Վանի երկրագործական օազիսի, Խարբերդ-Մալաթիայի, Հեքիմհանի, Հինձորի, Բալուի, Տարոնի, Կարինի և այլ վայրերի տասնյակ հուշարձաններ[5]։ Սովետական Հայաստանի տարածքում կրկնակի հետազոտվեցին Թեղուտի, Ծաղկունքի, Խաթունարխի, Քյուլ-Թափայի հուշարձանները (Ռ. Թորոսյան)[6]։ Սրանց նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Եփրատի արևմտյան մարզերից մինչև Քուռ-Արաքսի հովիտները և նրանց միջև ընկած դաշտային Ղարաբաղը ծածկված են բնակավայրերի խիտ ցանցով, որոնք ներկայացնում են Հայաստանի խուրրիտալեզու բնակչության վաղ երկրագործական-անասնապահական մշակույթն իր ամբողջության մեջ, իբրև մի միասնական մշակույթ՝ ժամանակագրական, տոհմա-ցեղային, ազգագրական բազում երանգներով։ Այս մշակույթի որոշ տեղական օջախներ երևացին Վրաստանի և Ադրբեջանի հարավային ու արևմտյան մասերում, սրանց արձագանքները տա-

[4] «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 94—100։

[5] C. A. Burney, Eastern Anatolia in the Chalcolitic and Early Bronze Age („Anatolian Studies", 1958, № VIII).

[6] Р. М. Торосян, Раннеземледельческая культура Армении (по материалам Техута, V и IV тыс. до н. э.), (автореферат кандидатской диссертации), Ереван, 1970, «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 110—125։

բածվեցին մինչև Լեռնային Դաղստան։ Հայաստանի պղնձաքարեդարի համար բնորոշ են ճարտարապետական առաջին որոշակի կառույցները, կուլտուրական բույսերի և ընտանի կենդանիների նախնական տեսակները, մետաղամշակության և խեցեգործության վաղ տիպի արտադրանքները, որոնք իրենց խոսուն զուգահեռներն ունեն առաջավոր-ասիական մշակույթներում։

Պղնձաքարեդարյան հուշարձանների մանրազնին ուսումնասիրությունն առանձնակի կարևորություն ունի ոչ միայն այն պատճառով, որ ուրվագծում է նախնադարյան-համայնական կարգերի արտադրող տնտեսության լինելիության վիթխարի հեղափոխական պրոցեսը, մետաղագործության, արհեստների ծագման ու անընդմեջ զարգացման պատկերը, այլև այն պատճառով, որ պատկանելով Հայկական լեռնաշխարհում բյուրեղացած խուրրիների հյուսիս-արևելյան ճյուղին և նրանց հետ աստիճանական զարգացում ապրելով մ. թ. ա. VI—V հազարամյակներից մինչև I հազարամյակը, այդ մշակույթը դառնում է կազմավորվող հայ մշակույթի հիմքը ճիշտ այնպես, ինչպես խուրրի-ուրարտացիների էթնիկ զանգվածը դառնում է հայերի բաղկացուցիչ մասերից մեկը։

Ցավոք, պրոբլեմի կարևորությանը հակադարձ համեմատական է նրա ուսումնասիրման վիճակը. վերը նշված տասնյակ հուշարձաններից ոչ մեկը Արևմտյան Հայաստանում չի ուսումնասիրվում՝ Անկարայի բրիտանական ինստիտուտի աշխատանքների դադարեցման հետևանքով, իսկ Սովետական Հայաստանում մասամբ ուսումնասիրվել է Թեղուտի բնակավայրը (Ռ. Թորոսյան) այն դեպքում, երբ Ուկրաինայում, Միջին Ասիայում, Անդրկովկասում, ինչպես նաև Առորիք-Պաղեստինում, Իրաքում, Իրանում, Կենտրոնական և Արևմտյան Թուրքիայում տասնյակ տարիներ ի վեր բաղում արշավախմբերի ջանքերով ուսումնասիրվում են նոր քարեդար-պղնձաքարեդարյան այժմ շատ հայտնի բազմաշերտ բնակավայրեր։ Ստացվում է այնպիսի տպավորություն, որ Հայաստանն այդ շրջանում անապատ էր։ Ստեղծվում են վաղ երկրագործական-անասնապահական մշակույթների տարածման ու զարգացման ոչ գիտական, կեղծ սխեմաներ, որոնցից հաճախ օգտվում են պարզապես գիտության հետ առնչություն չունեցող մարդիկ։

Ստեղծված վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է կազմակերպել գոնե 3—4 արշավախումբ և անցնել հնավայրերի կանոնավոր, տևական պեղումներին։ Ըստ այդմ, անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել արտադրողական ուժերի զարգացման՝ հատկապես մետաղամշակության ծագման ու նախնական զարգացման պրոբլեմին, որն առանցքային նշանակություն ունի ողջ Արևելքի չափանիշով։ Խնդիրն այն է, որ Հայկական լեռնաշխարհում էին գտնվում Ասիայի ամենահարուստ մետաղահանքերը, որտեղ, ըստ երևույթին, պղնձաքարեդարում և վաղ բրոնզե դարում տեղացիները մասնագիտանում էին մետաղահանության ու մետաղի փոխանակման մեջ։ Պատահական չէ, որ աշխարհում հայտնի հնագույն մետաղի նմուշները գտնվել են Վանա լճի ափին, Արարատյան դաշտում, Ուրմիայի ափերին (մ. թ. ա. V—IV հազարամյակներ), Անգեղ տուն գավառում (Զայոյնու-Թեփեզի բնակավայր, մ. թ. ա. VI հազարամյակ) և մետաղազուրկ Կոնիայի դաշտում (Զաթալ-Հույուք, Հաջիլար, մ. թ. ա. VI—V հազարամյակներ)։ Գուցե սա գիտնականների կողմից տասնամյակներ ի վեր փնտրվող այն գոտին է, ուր սկիզբ են առել մետաղահանությունն ու մետաղամշակությունը։ Միայն սրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ մ. թ. ա. III հազարամյակում Հայկական Միջագետքը, Ռշտունիքը,

Ջուլամերկը և Սասունը դառնում են Հին Արևելքի երկրների մետաղի շտեմարան, իսկ II հազարամյակում նրանք առաջին տեղն են գրավում մետաղահանության ու մետաղի փոխանակման գործում։

Կովկասյան և հարավ-ռուսական շրջանների մետաղամշակության համար նույնքան կարևոր դեր են կատարում Լոռի-Զանգեզուրի շրջանները, որտեղ մ. թ. ա. III հազարամյակում ձևավորվում են մետաղագործական խոշոր օջախներ[7]։ Նշված հարցերի մանրազնին ուսումնասիրության համար արժե կազմակերպել հնագետներից, արևելագետներից, երկրաբաններից, քիմիկոսներից, մետաղագետներից բաղկացած պրոբլեմային խումբ, որը նախ և առաջ ուսումնասիրի Հայաստանի հնագույն մետաղահանքերը, նրանց շահագործման ինտենսիվության չափը և նշանակությունը Առաջավոր Ասիայի և Կովկասի տնտեսական զարգացման մեջ։

Անհրաժեշտ է նաև պրոբլեմային խումբ կազմակերպել Հայաստանի ժայռապատկերների ուսումնասիրության համար, որոնք նույնպես ծայր են առնում ուշ նոր քարեդար-պղնձաքարեդարյան շրջաններում իբրև տեղական խուրրիտալեզու ցեղերի հոգևոր մշակույթի հուշարձաններ և նրանց հետ գոյատևում են մինչև վաղ հայկական ժամանակաշրջանը։ Ուսումնասիրության հսկայական նյութեր են ընձեռում Գեղամա լեռներում (Ս. Սարգարյան, Ա. Պետրոսյան, Հ. Մարտիրոսյան, Ս. Մեժլումյան, Ռ. Թորոսյան, Հ. Իսրայելյան), Արագածում (Ս. Սարգարյան, Կ. Մկրտչյան), Սիսիանում (Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան), Մեծամորում (Կ. Մկրտչյան, Է. Խանզադյան), Մարտունու, Բասարգեչարի շրջաններում, Մաստարայի մոտ (Հ. Մարտիրոսյան)[8] և այլուր հայտնաբերված ժայռապատկերների հիասքանչ խմբերը, որոնք գաղափար են տալիս նախնադարյան որսորդ-անասնապահների և երկրագործների նյութական կյանքի այլ և այլ կողմերի, որսորդ-անասնապահական և երկրագործական պաշտամունքի, հավատալիքի, ծեսերի, ծիսական պարերի, ինչպես նաև երկրագործության զարգացման հետ կապված նախնական հավատալիքների ու պաշտամունքների մասին, որոնք հաճախ ներկայացվում են երկնային մարմինների երկրաչափական պատկեր-սիմվոլներով։ Այս նյութերի գիտական ուսումնասիրությունը պահանջում է համախմբել հայ և հին արևելյան հնագիտության, առասպելաբանության, բանասիրության, ազգագրության և հնէակենդանաբանության գիտակ մասնագետների ուժերը։

Առանձին և երկարատև ուսումնասիրության առարկա պետք է դառնան ժայռապատկերներում և նախնադարյան նյութական մշակույթի այլևայլ առարկաների վրա փորագրված, ձուլված, դաջված նշանագիր-դաղափարագրերը, որոնք ուրարտա-հայկական նույնատիպ մեհենական դրության առաջացման հիմք են դարձել։ Այս նշանագրերի նախնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի նախնադարյան նշանագրությունն ընդգրկել

---

[7] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, стр. 24—34, «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 137—145։

[8] Ս. Հ. Սարգարյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 113—123, աղ. XXI—XXIII, «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 247—276, Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Իսրայելյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1971, Հ. Ռ. Իսրայելյան, Պաշտամունքն ու հավատալիքն ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973, Գ. Հ. Կարախանյան, Պ. Ս. Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները, Երևան, 1970։

է հասարակության սոցիալական կառուցվածքը, նյութական արտադրությունն ու արտադրամիջոցները, երկրագործական և անասնապահական հավատալիքներն արտացոլող նշանախմբեր, ինչպես նաև մի առանձին խմբի պատկերներ, նշաններ կամ գաղափարագրեր, որոնք արտացոլում են աստղագիտության և աստղագուշակության սկզբնավորումը նախնադարյան Հայաստանում։ Առանձնապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում համաստեղություններ խորհրդանշող հիերոգլիֆները[9]։ Լավ կլինի նման նյութերը քննարկել աստղագիտության պատմաբանների մասնակցությամբ։

Պղնձաքարեդարյան համեմատաբար զարգացած տնտեսության ու մշակույթի հիման վրա մ. թ. ա. IV հազարամյակի վերջերին ձևավորվում է Հայաստանի վաղ բրոնզեդարյան մշակույթը, որը ներկայացված է Արևմտյան և Սովետական Հայաստանում հայտնաբերված մոտ 200 հուշարձաններով։ Նշված հուշարձանների տեղադրությունը հնարավորություն ընձեռեց հաստատելու, որ մ. թ. ա. III հազարամյակի վաղ բրոնզեդարյան մշակույթը ևս զբաղեցրել է Հայկական լեռնաշխարհի բնական սահմանները՝ Վանից ու Մալաթիայից մինչև Կապուտան լիճ և Արաքսի հովիտ։ Այս մշակույթի տեղական օջախները ուսումնասիրվում են նաև Վրաստանում ու Ադրբեջանում, իսկ նրա ազդեցության ոլորտները նշմարվում են Հյուսիսային Կովկասում, Իրանական Ադրբեջանում, Ասորիք-Պաղեստինում և Կիլիկիայում։ Ըստ այդմ, մ. թ. ա. III հազարամյակի առավել երևելի հուշարձանները գտնվում են Խարբերդ-Մալաթիայի և Արարատյան դաշտի սահմաններում՝ կասկած չթողնելով, որ այդ ինքնատիպ մշակույթի կենտրոնը Հայկական լեռնաշխարհն է եղել։ Ձնայած հուշարձանների ուսումնասիրությանն ու կարևորությանը, Արևմտյան Հայաստանում և Պարսկահայաստանում պեղվել են ընդամենը մի քանի բնակավայրերի փոքրիկ հատվածներ, իսկ Սովետական Հայաստանի տարբեր շրջաններում բազմաթիվ հնավայրերի մասնակի պեղումները գլխավորապես հետախուզական-ստուգողական բնույթ են կրել։ Այս եղանակով ուսումնասիրված օբյեկտների թվին են պատկանում Ե. Լալայանի, Ե. Բայբուրդյանի, Բ. Պիոտրովսկու, Հ. Մարտիրոսյանի, Է. Խանզադյանի, Ս. Եսայանի, Հ. Մնացականյանի, Գ. Արեշյանի, Լ. Պետրոսյանի, Ս. Հարությունյանի, Ա. Քալանթարյանի, Գ. Միքայելյանի, Ս. Ջիլինգարյանի և այլոց կողմից հետախուզված կամ մասնակիորեն պեղված ավելի քան 40 բնակավայրերի ու դամբարանադաշտերի մնացորդներն Արարատյան դաշտում (Քյուլ-Թափա, Շրեշ-բլուր, Մոխրաբլուր, Արևիկ, Արագած, Ջրառատ և այլն), Շիրակում (Կառնուտ, Լենինական, Քեթի և այլն), Տաշիր-Ձորագետում (Քոսի ճոթեր, Ալավերդի, Թագավորանիստ, Դիմաց, Լորուտ և այլն), Նոյեմբերյանի շրջանում (Ջուլևան, Նոյեմբերյան և այլն), Ամասիայի, Սևանի, Աբովյանի (Քյալաֆիք) շրջաններում ու Սևանի ավազանում (Քաղսի, Սևան, Կամո, Լճաշեն, Կարճաղբյուր) և այլուր[10]։

---

9 Հ. Ա. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Երևան, 1973։

10 Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949, стр. 25—32, табл. II; А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 25—47, рис. 1—14, Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. 3-րդ հազարամյակում, Երևան, 1967, նույնի՝ Գառնի, IV, Երևան, 1969, էջ 7—45, նկ. 1—39, աղ. I—XXIII, Ս. Հ. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, էջ 161—246, «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 126—146։

Այս աշխատանքների շնորհիվ հնարավոր դարձավ հաստատել վաղ բրոնզեդարյան մշակույթի բնորոշ գծերը՝ տարածման արեալներն ու կարևորագույն տեղական խմբերը, ազդեցության ոլորտներն ու հեռավոր կապերը, բնակավայրերի, ամրոցների, դամբարանների տիպերը, բնույթը, չափերը և այլն, երկրագործության, անասնապահության ու արհեստագործության տեխնոլոգիան, մակարդակը, արտադրանքի տիպերն ու տեսակները, փոխանակային կապերը Կովկասի, ասսուրա-շումերական և արևելամիջերկրական քաղաքակրթության օջախների հետ, ինչպես նաև ուսումնասիրել համայնքի ներքին զարգացման հետ կապված մի քանի կարևոր հարցեր։

Նշված շրջանի մշակույթի ուսումնասիրությունը որոշակի հաջողություններ հետ միասին ունի նաև թերություններ, որոնք բխում են ինչպես Արևմտյան Հայաստանի հուշարձանների ոչ ինտենսիվ ուսումնասիրությունից, այնպես էլ այն հանգամանքից, որ Սովետական Հայաստանում էլ մոտ 15 տարի կանոնավոր ուսումնասիրության միակ օբյեկտ է եղել Շենգավիթի խոշոր ու բազմաշերտ բնակատեղին (Ս. Սարդարյան)։ Վերջին հինգ տարվա ընթացքում սկսվել են Ջրահովիտի (Է. Խանզադյան), Այդևանի (Բ. Պիոտրովսկի և Ս. Եսայան) և Մոխրաբլուրի (Գ. Արեշյան) բազմաշերտ և հարուստ բնակատեղիների պեղումները, որոնք կոչված են արմատական նշանակություն ունեցող այնպիսի պրոբլեմների ու խնդիրների գիտական լուսաբանմանը, ինչպիսիք են վաղ բրոնզեդարյան մշակույթի գենեզիսը, հուշարձանների պարբերացումն ու թվագրումը, նրանց հիմնական խմբերը՝ մշակույթի գլխավոր ու երկրորդական օջախները, հիմնական և ծայրամասային օջախների հարաբերակցությունը, համայնքի զարգացման ներքին օրինաչափությունները և բազմաթիվ ավելի մանր խնդիրներ, որոնք նեղ մասնագիտական հետաքրքրություն են ներկայացնում։

Նախորդ շրջանի համեմատությամբ սակավ է ուսումնասիրված, այսպես կոչված, միջին բրոնզեդարյան մշակույթը, որն ընդգրկում է մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսը և մեծ կարևորություն ներկայացնում ոչ միայն նրանով, որ նախնադարյան տնտեսության ճյուղերը՝ երկրագործությունը, անասնապահությունը և արհեստագործությունը այդ ժամանակ հասնում են նախնադարյան զարգացման հնարավոր բարձրակետին, այլև այն բանով, որ կենսական տեղաշարժեր են դիտվում հասարակության սոցիալ-քաղաքական պատմության մեջ՝ նախնադարյան համայնական կարգը որոշակիորեն անկման ուղին է բռնում, տոհմա-ցեղային կազմակերպությունը ինչքային անհավասարության պատճառով տարալուծվում է, որոշակիորեն ձևավորվում է մասնավոր տնտեսության, տնտեսական ու քաղաքական ժառանգականության ինստիտուտը, առաջանում են անհավասար տնտեսական պայմաններ առանձին ցեղերի ու ցեղային միությունների միջև, ցեղային որոշ միությունների քաղաքական արեալների սահմաններում առաջանում են անդրանիկ պետական կազմակերպությունները, Հայկական լեռնաշխարհի որոշ ծայրամասային շրջաններ մտնում են ակկադական թագավորության, մյուսները՝ Խուրրի-Միտանիի և Հայասա-Ազիի վաղ պետական կազմավորումների մեջ։ Արևելյան Հայաստանի շրջանները որոշ չափով ետ են մնում սոցիալ-քաղաքական զարգացման առումով, սակայն այստեղ էլ տոհմա-ցեղային կարգը հասնում է պետական իշխանության կազմավորման նախաշեմին։

Հասկանալի է, որ այսպիսի կարևորություն ներկայացնող ժամանակաշրջանի մշակույթի հուշարձանները պետք է ուսումնասիրվեին մեծ թափով, ծավալով ու խորությամբ, մանավանդ որ խուրրի-միտանական և հայասական էթնիկ խոշոր միավորումներն ավելի քան կարևոր դեր կատարեցին հայ ժողովրդի կազմավորման երկարամյա ուղիներում։ Սակայն պրոբլեմների արդիականությանը հակադարձ համեմատական է հուշարձանների ուսումնասիրության վիճակը։ Սովետական Հայաստանի տարածքում ուսումնասիրված են միայն Երևանի, Թաղաքենդի, Մուխանաթ-թափայի (Ե. Բայբուրդյան, Ս. Եսայան, Ա. Զարիկովսկի), Էջմիածնի (Հ. Մարտիրոսյան), Էլարի, Աշտարակի, Ֆրանկանոցի, Այզեշատի, Աղավնատան, Ապարանի (Ե. Բայբուրդյան, Ռ. Թորոսյան, Թ. Խաչատրյան), Գառնիի (Բ. Առաքելյան, Է. Խանզադյան), Մարտունու (Ժ. Խաչատրյան, Ա. Քալանթարյան), Նորադուզի, Առինջ գյուղի (Գ. Միքայելյան) և մի քանի այլ հուշարձաններ։ Սրանց մեջ ամենաերևելիները բացված են Լճաշենում և Կիրովականում (Բ. Պիոտրովսկի, Հ. Մնացականյան)[11], իսկ Սովետական Հայաստանից ոչ հեռու՝ Մալկայի սարահարթում, Մուղան-Ղարաբաղի (Բ. Կուֆտին, Ա. Իեսսեն, Կ. Քուշնարյովա[12]) տափաստանում, Արաքսի ափում գտնվող Կարմիր-վանքում և Կարսի մարզում, որոնցով առայժմ եզրագծվում է գունազարդ խեցեղենի կուլտուրայի տարածման արեալը։ Ուսումնասիրվածն այնքան քիչ է, որ գոհացուցիչ պատկերացում չունենք ողջ Արևմտահայաստանի մ. թ. ա. II հազարամյակի մշակույթի, անգամ Հայասա-Ազիի և Խուրրի-Միտանիի մշակույթների մասին, միանգամայն վատ ենք պատկերացնում նրանց գենեզիսի հարցերը, կապերն ու փոխհարաբերությունները առանձնապես Արևելյան Միջերկրականի, Եգեյան աշխարհի, արևմտա-անատոլիական ու կապադովկիական մշակույթի օջախների, ինչպես նաև Կովկասի և իրանական աշխարհի հետ։

Այս պրոբլեմների մշակումը հնարավոր կդառնա միայն հնագիտական այնպիսի աշխատանքների հիման վրա, որոնք Սովետական Հայաստանի ու Անդրկովկասի տարածքից բացի ընդգրկեն նաև Արևմտյան Հայաստանը, Փոքր Ասիան, Եգեյան աշխարհը և Հյուսիսային Իրանը, որտեղ վերջին ժամանակներս ի հայտ են եկել Հայաստանի համաժամանակյա մշակույթի հետ առնչվող բազում հուշարձաններ։ Ֆրանսիական ու ամերիկյան հնագետները նախաձեռնել են այս պրոբլեմի ուսումնասիրությունը և այժմ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում նշված աշխարհագրական արեալի նկատմամբ։

Ուշ բրոնզի դարաշրջանը ներկայացված է մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսի հարյուրավոր դամբարանադաշտերով, կիկլոպյան ամրոցներով ու բնակավայրերով։ Հուշարձանների նշված խմբերի մեջ առավել ուսումնասիրված են դամբարանային հուշարձանները։ Այժմ Կովկասի և Առաջավոր Ասիայի չափանիշով առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Լճաշենի, Արթիկի և Ստեփանավանի դամբարանադաշտերը (Հ. Մնացականյան, Թ. Խա-

---

11 Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., 33—43, Ի. Վ. Խանզադյան, Գառնի, IV, էջ 83—123, նկ. 80—97, տախտ. I—VIII, «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 158—181, А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 47—78, նկ. 15—37, աղ. I—III. Հ. Մնացականյան, Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները («Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2)։

12 К. Х. Кушнарева, Новые данные о поселении Узерлик-Тепе («Материалы и исследования по археологии СССР», № 125, М.—Л., 1965).

չատրյան, Ս. Դևեջյան), որոնք աչքի են ընկնում թե՛ իրենց գրված տարածությամբ, թե՛ դամբարանատիպերի կոնստրուկտիվ առանձնահատկություններով և թե՛ հնագիտական նյութի բազմազանությամբ ու շքեղությամբ։ Ցավոք, նախասովետական շրջանում Ե. Լալայանի պեղած շուրջ 500 դամբարանների արդյունքները չհրատարակվեցին, իսկ այժմ էլ նույն ճակատագրին են արժանանում Լճաշենի շատ կարևոր նյութերը։ Արթիկի նյութերը հրատարակված են մոտավորապես մեկ երրորդի չափով, թեև այս հնավայրերը ուսումնասիրվում են արդեն մեկուկես-երկու տասնամյակի ընթացքում և ունեն ամուր նյութական բազա։

Այսուհանդերձ, ուշ բրոնզե դարի հուշարձանների ուսումնասիրությանը նվիրված են բազմաթիվ աշխատություններ, որոնց մեջ հանգամանալից քննված են տնտեսության զանազան ճյուղերի արհեստների, արվեստի, ճարտարապետության, փոխանակության ու կուլտուրական հարաբերությունների, պարբերացման ու թվագրման, արտադրության տեխնիկայի և շատ ու շատ այլ հարցեր[13]։

Գրավոր աղբյուրների բացակայության և բնակավայրերի պակաս հետազոտության հետևանքով որոշակիորեն ետ է մնում սոցիալ-քաղաքական, ներտոհմային և էթնիկ պրոբլեմների ուսումնասիրությունը, թեև վերջին տասնամյակում հայտնաբերված, չափագրված ու նկարագրված են հարյուրների հասնող մեծ ու փոքր կիկլոպյան ամրոցներ (Ս. Ծսայան, Գ. Միքայելյան, Ս. Ջիլինգարյան, Կ. Ղաֆադարյան և ուրիշներ), որոնք ծագած լինելով վաղ և միջին բրոնզեդարյան էտապներում, իրենց ծաղկմանն են հասնում մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսին և ձևավորվում իբրև նահապետական շրջանի խոշոր բնակավայրեր։ Թվարկված բնակավայրերից պեղված և ուսումնասիրված են Կարմիր-բլուրի նախաուրարտական բնակատեղին (Հ. Մարտիրոսյան, Վ. Սոբոկին), Լճաշենի կիկլոպյան ամրոցն ու բնակատեղին (Հ. Մնացականյան, Գ. Միքայելյան) և Մեծամորի ամրոց-բնակատեղին (Կ. Մկրտչյան, Է. Խանզադյան)[14], որտեղ կյանքը հարատևել է վաղ բրոնզե դարից մինչև Ուրարտուի անկումը։ Կարմիր-բլուրի բնակատեղում պեղվեցին մ. թ. ա. II հազարամյա-

---

13 Ե. Ա. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1930, Б. Б. Пиотровский, Նշվ. աշխ., էջ 44—97, աղ. IV—VIII, А. О. Мнацаканян, Раскопки курганов на побережье оз. Севан («Советская археология», 1957, №·2, Նույնի՝ Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները («Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2), Հ. Ա. Մարտիրոսյան, Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր («Հայաստանի հնագիտական հուշարձաններ», հ. 2, Երևան, 1969), Նույնի՝ Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 81—193, рис. 38—75, табл. V—XIV; Т. С. Хачатрян, Материальная культура Артика, Ереван, 1963; С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении, Ереван, 1956, Նույնի՝ Каталог археологических экспонатов, I, Ереван, 1964, Каталог археологических экспонатов, II, Ереван, 1967; О. С. Хникикян, Ремесла Армении в эпоху поздней бронзы и раннего железа (автореферат кандидатской диссертации), Ереван, 1972; А. Ц. Геворкян, Древнейшая металлургия и горное дело Армении (автореферат кандидатской диссертации), М., 1972.

14 А. А. Мартиросян, Город Тейшебаини, Ереван, 1960, стр. 7—90, Գ. Հ. Միքայելյան, Սևանի ավազանի ցիկլոպյան ամրոցները, Երևան, 1968։ «Հայաստանի հնագիտական հուշարձանները», հ. I, Կ. Հ. Մկրտչյան, Է. Վ. Խանզադյան, Է. Հ. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1974։

կի վերջին քառորդի և I հազարամյակի առաջին քառորդի ընտանեկան մեծ համայնքների մի քանի բնակարանային համալիրներ՝ երկրագործական-անասնապահական պաշտամունքի տիպական տեղամասերով, մետաղագործական արհեստների բնորոշ մնացորդներով և դամբարանային բավական խոսուն հուշարձաններով։ Լճաշենի հսկա բնակատեղին իր երկու ամրոցներով և նրանցից դուրս ծավալվող բնակելի թաղերով հիշեցնում է հետագայի ուրարտական քաղաքները և կարծես վկայում է, որ մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսին Հայկական լեռնաշխարհում տեղի է ունեցել «քաղաքային հեղափոխություն»։ Ավելի ընդարձակ և երկարամյա ուսումնասիրության առարկա դարձավ Մեծամորի ամրոց-բնակատեղին՝ տասնյակ կավակերտ հնոցներով, բնակելի տարածություններով, պաշտամունքային ժայռանկարներով, աստղագուշակարան-աստղադիտարանով և տաճարական սրահների հսկա համալիրով, որոնք օժտված են ծեսերի ու արարողությունների ամենաբազմազան հարմարանքներով։

Ուշ բրոնզեդարյան բնակատեղիի ոչ պակաս հետաքրքիր մնացորդներ ուսումնասիրվում են նաև Դվինի միջնադարյան ամրոցի շերտերի տակ (Կ. Ղաֆադարյան, Կ. Քուշնարյովա), որտեղ նույնպես առկա են երկրագործական պաշտամունքին նվիրված մեհյաններ՝ իրենց ինքնատիպ զոհասեղաններով, պաշտամունքային հիասքանչ խեցեղենով և մետաղագործական արհեստանոցի հետաքրքիր մնացորդներով։ Դվինի տաճարական խեցեղենն իր նմանը չունի ողջ Առաջավոր Ասիայում և ինքնուրույն ուսումնասիրության նյութ է։

Դամբարանային և կենցաղային օբյեկտների պեղումներով ստացված տվյալները բնորոշում են ուշ բրոնզե դարը իբրև տոհմատիրական կարգերի փլուզման, հայ էթնոսի ձևավորման ժամանակաշրջան, երբ նահապետական մեծ ընտանիքը տրոհվում է, ինչքային անհավասարությունը բզկտում է հին կարգերը, երևան է գալիս տնային ստրկությունը, արմատական փոփոխություններ են տեղի ունենում տնտեսության մեջ, որոնք հասցնում են ոչ միայն երկրագործության ու անասնապահության բաժանմանը՝ հասարակական արտադրության առաջին մեծ տրոհմանը, այլև արհեստագործության հիմնական ճյուղերի բաժանմանը երկրագործությունից և անասնապահությունից։ Ինչպես երևում է, ուշ բրոնզե դարի ուսումնասիրության ասպարեզում առկա են որոշակի հաջողություններ, սակայն թերությունները և ապագայի հեռանկարներն էլ քիչ չեն։ Բավական է ասել, որ քննարկվող շրջանի Արևմտյան Հայաստանում գտնվող հուշարձանները գրեթե բոլորովին ուսումնասիրված չեն, քիչ են հայտնի նաև Թուրքիայի, Իրանի և Իրաքի համաժամանակյա հուշարձանները։ Այս հանգամանքները դժվարացնում են ուշ բրոնզեդարյան Հայաստանի ընդհանուր մշակույթի, նրա կապերի, փոխհարաբերությունների, ազդեցության ոլորտների բացահայտումն ու մեկնաբանումը։ Շատ քիչ են ուսումնասիրված ուշ բրոնզեդարյան մշակույթի առանձին օջախները, երկաթագործության առաջացման պայմանները, նրա ծագման հիմնական շրջանները, դերը Առաջավոր Ասիայում և այլն։ Քիչ ուշադրություն է նվիրված ուշ բրոնզեդարյան հավատալիքներին ու պաշտամունքին, թույլ է ուսումնասիրված արվեստը, թեև այս ամենն ընկած էր ուրարտական և հայ մշակույթի բուն հիմքում։ Բոլորովին պարզ չէ նաև ուրարտական մշակույթի գենեզիսը, եթե մի կողմ դնենք նրա ասսուրական շղարշը։

Վաղ երկաթեդարյան մշակույթը ընդգրկում է ուրարտական պետության գոյատևման ժամանակաշրջանը (մ. թ. ա. IX—VI դդ.) և իրենից ներկայացնում Հայաստանի ոչ ուրարտական ցեղերի տնտեսությունը, արհեստները, հավատալիքը, պաշտամունքն ու արվեստը, տարածքային-գյուղական համայնքի և հայ ժողովրդի կազմավորման եզրափակիչ փուլում։ Վաղ երկաթեդարյան մշակույթը զարգանում էր ուրարտական մշակույթին զուգահեռ, նրա ազդեցության տակ՝ իբրև ուշ բրոնզեդարյան մշակույթի երկաթեդարյան շարունակություն։ Սա այն մշակույթն է, որից անմիջականորեն ծագում է վաղ հայկական և ապա հելլենիստական մշակույթը։ Այս շրջանի հուշարձանների ուսումնասիրությունն առանձնակի հետաքրքրություն ունի հայոց պատմության սկզբնական շրջանն ուսումնասիրելու տեսակետից։ Մ. թ. ա. IX—VI դդ. թվագրվող պեղված հուշարձանների մեջ առանձնապես աչքի են ընկնում Տաշիր-Զորագետի (Շեյթանդաղի, Ախթալայի, Մուսիերիի դամբարանները, որոնց նյութերը պահպանվում են Լուվրում), ինչպես նաև Գոլովինոյի (Խրտանոցի) դամբարանային նյութերը (Հ. Մարտիրոսյան), որոնք մանրազնին ուսումնասիրության են ենթարկված։ Այս շրջանի շատ հարուստ նյութեր են հայտնաբերվում Լոռի բերդի դամբարանադաշտում (Ս. Դևեջյան)։ Այս շրջանի բնակավայրերը նույնն են, ինչ որ ուշ բրոնզեդարյանները (Կարմիր-բլուրի նախաուրարտական, Մեծամորի, Լճաշենի և Դվինի նախահայկական շերտեր)[15]։

Կարևոր նշանակություն ունի նաև Ուրարտուի պատմության և մշակույթի ուսումնասիրությունը։ Ուրարտական պետությունը ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի ցեղային միություններից բաղկացած այն հզոր քաղաքական կազմակերպությունն էր, որ միավորեց ողջ Հայկական լեռնաշխարհը, նոր մակարդակի բարձրացրեց երկրի տնտեսությունն ու մշակույթը, դարերի ընթացքում դիմագրավեց սեմիտական էքսպանսիային և հող նախապատրաստեց հայկական պետականության համար։ Անհնար է պատկերացնել հայ պետականության ստեղծումը առանց Ուրարտուի։ Զուլվելով հայ էթնոսի մեջ, մեր ուրարտալեզու-խուրրիտալեզու նախնիները կորցրին իրենց լեզուն, սակայն լիովին պահպանեցին նյութական և հոգևոր մշակույթի ավանդույթները և մարդաբանական տիպը հայոց մեջ։ Այդ բոլոր առումներով Ուրարտուի պատմությունը Հայաստանի, հայ պետականության և մշակույթի պատմության մասը, որոշ իմաստով նախասկզբնական էտապն է՝ առանց հայոց լեզվի։ Ուրարտացիների փայլուն մշակույթը ներկայացված է քաղաքների, բնակավայրերի, ամրոցների, դամբարանադաշտերի սեպագիր արձանագրությունների հսկայական քանակով։ Այս հուշարձանների ուսումնասիրության գծով առանձնապես ակնառու աշխատանքներ են կատարել սովետական հնագետ-պատմաբանները։ Այդ աշխատանքները վերջին 30 տարում ծավալվել են երկու գլխավոր ուղղություններով՝ սեպագիր արձանագրությունների[16] և քաղաքական պատմության ուսումնասիրության, մշակույթի հուշարձանների պեղումների, որոնք առաջ-

---

15 Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 114—121, · А. А. Мартиросян, Раскопки в Головино, Ереван, 1954, նույնի՝ Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 269—293, рис. 105—110, таб. XX—XXIII.

16 Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944; Г.. А. Меликишвили, Наири-Урарту, Тбилиси, 1954; Н. В. Арутюнян, Биайнили-Урарту, Ереван, 1970, «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 279—414։

նակարդ նյութեր են ընձեռում երկրագործության, անասնապահության և արհեստների, մշակույթի, արվեստի, հավատալիքների, կենցաղի և նյութատնտեսական ու հասարակական կյանքի այլ կողմերի վերաբերյալ։ Նշված ժամանակաշրջանում հայտնաբերվել և ուսումնասիրվել են ուրարտական 4 թագավորների արձանագրությունները Կամոյից, Ջանֆիդայից և Դառնիից. մոտ 40 նոր արձանագրություններ են հայտնաբերվել միայն Թեյշեբաինիի, Էրեբունիի և Արգիշտիխինիլիի պեղումների ընթացքում, մի քանի հարյուր մանր արձանագրություններ՝ բրոնզե իրերի վրա և մեկ տասնյակից ավելի կավե տախտակներ (Թեյշեբաինիի տնտեսական արխիվի մնացորդները)։ Այս նյութերի մշակմամբ զբաղվել են Գ. Ղափանցյանը, Բ. Պիոտրովսկին, Գ. Մելիքիշվիլին, Ի. Դյակոնովը, Ն. Հարությունյանը և ուրիշներ[17]։

Զուգահեռաբար հայտնաբերվել կամ ուսումնասիրվել են Երևանի և Նոր Արեշի կոլումբարիները, Ծովինարի, Արագածի, Գյանջա-յոլի, Արամուսի ամրոց-բնակատեղիները (Բ. Պիոտրովսկի, Հ. Մարտիրոսյան, Կ. Հովհաննիսյան և ուրիշներ), Թեյշեբաինի, Էրեբունի և Արգիշտիխինիլի մեծ քաղաքները[18]։ Կարմիր-բլուր-Թեյշեբաինիի տարածքում ամբողջությամբ պեղվեց ամրոցի շենքը (մոտ 150 սենյակներով) և միջին քաղաքի բնակելի առանձնատների որոշ թաղամասեր։ Այս պեղումները առանձնապես հարուստ նյութ ընձեռեցին ճարտարապետության, տնտեսության և կենցաղի, արհեստների, արվեստի, կրոնի, ինչպես նաև Ուրարտուի բարդ ու համակողմանի կուլտուր-տնտեսական-առևտրական փոխհարաբերությունների ու կապերի վերաբերյալ, Առաջավոր Ասիայի ու Կովկասի, Եգեյան աշխարհի, Հունաստանի, հեռավոր Էթրուրիայի, Եգիպտոսի և քաղաքակիրթ աշխարհի այլ օջախների հետ։

Ուրարտական ճարտարապետության և արվեստի արժեքավոր նյութեր տվեցին Արին-բերդ-Էրեբունիի պեղումները։ Աշխարհիկ և պաշտամունքային նշանակության հիանալի սրահներում, բացի բազմաթիվ սեպագիր արձանագրություններից ու նյութական մշակույթի արգասիքներից, ի հայտ են բերված կրոնական և աշխարհիկ բնույթի բազմագույն որմնանկարների մեծ թվով ֆրագմենտներ, որոնք պատկերում են թագադրման ծեսի ու թագավորական որսի շքեղ տեսարաններ, գյուղական արտադրական կյանքի անկրկնելի թեմաներ, կրոնական կանոնիկ մոտիվներ, գեղեցիկ զարդանախշեր և այլն։ Թեյշեբաինիի պեղումները դադարեցված են, թեև ուսումնասիրություններից դուրս են մնացել քաղաքի բնակելի թաղամասերի հսկա տարածությունները։ Գրեթե. ավարտին են հասնում Էրեբունիի պեղումները։

Լրիվ թափով շարունակվում են միայն ուրարտական խոշորագույն քաղաքներից մեկի՝ Արգիշտիխինիլիի պեղումները, որի 1000 հեկտարանոց տարածքի վրա պեղվում են քաղաքի երկու հզոր ամրոցները և բնակելի թաղամասերի

---

[17] Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960; И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту («Вестник древней истории», 1951, № 2, 3, 4), *Նույնի՝* Урартские письма и документы, М.—Л., 1963; Н. В. Арутюнян, Новые урартские надписи Кармир-Блура, Ереван, 1966.

[18] Б. Б. Пиотровский, Кармир-Блур, I—III, 1950—1955; К. Л. Оганесян, Арин-Берд, I, Ереван, *1961, Նույնի՝ Էրեբունիի որմնանկարները, Երևան, 1973,* А. А. Мартиросян, Раскопки Аргиштихинили («Советская археология», 1967, № 4), *Նույնի՝* К социально-экономической структуре города Аргиштихинили («Советская археология», 1972, № 3).

համեմատաբար լավ պահպանված առանձնատները։ Այս աշխատանքներն առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Ուրարտուի ճարտարապետության ու շինարարական տեխնիկայի, քաղաքաշինական առանձնահատկությունների, քաղաքային տնտեսության, կենցաղի, արհեստների, քաղաքի սոցիալական կառուցվածքի և ընդհանրապես ուրարտական քաղաքի պրոբլեմի քննարկման իմաստով։ Տասներկու տարվա պեղումների ընթացքում Արգիշտիխինիլին տվել է վերին աստիճանի արժեքավոր նյութեր, որոնք ցույց են տալիս հայ մշակույթի ակունքները։ Արգիշտիխինիլին մեր հին մշակույթի առայժմ եզակի այն հուշարձանն է, որտեղ կարելի է պարզ տեսնել, թե ինչպիսի խոշոր նշանակություն է ունեցել ուրարտական ժառանգությունը հայ մշակույթի ձևավորման գործում։

Սովետական Հայաստանում կատարվող ուրարտագիտական ուսումնասիրությունների ազդեցության տակ վերջերս բավական ծավալուն աշխատանքներ սկսվեցին նաև Արևմտյան Հայաստանի և Պարսկահայաստանի տարածքներում։ Թուրքիայում կատարվող աշխատանքները ծավալվում են գերազանցապես Տուշպա մայրաքաղաքի շուրջը և պատկերացում են տալիս Ուրարտուի կենտրոնական շրջանների քաղաքների մասին[19], իսկ Իրանում կատարվող աշխատանքները՝ Ուրմիա լճի շրջակայքում, մինչև Թավրիզ և ներկայացնում են Ուրարտուի ծայրամասային մարզերի մշակույթը[20], նրա կապերը իրանական հին մշակույթի հետ։ Նշված օբյեկտների մեջ կան աչքի ընկնող այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են Ալթին-Թեբեն՝ Երզնկայի դաշտում և Կալատդաշը՝ Կապուտանից հարավ։

Ուրարտական թագավորության պատմության ու մշակույթի ասպարեզում ձեռք բերված հաջողություններն իրապես անուրանալի են, սակայն նույնքան նշանակալից են պակասները։ Բավական է ասել, որ առայժմ չեն հայտնաբերված ուրարտական քաղաքների արխիվները՝ երկրի տնտեսությանը, ներքին և արտաքին կյանքին վերաբերող ողջ գրագրությունը։ Դրա հետևանքով լիովին պարզված չեն ուրարտական պետության ծագման ու լինելիության պատմությունը, նրա կառուցվածքն ու բնույթը, բնակչության սոցիալական կազմն ու սոցիալ-տնտեսական հարաբերությունները, ստրկության և քաղաքաշինության պրոբլեմները, հողային հարաբերությունները։ Թույլ պատկերացում կա ուրարտերեն լեզվի, գրականության ու կրոնի մասին։ Շատ քիչ են ուսումնասիրված Ուրարտուի փոխհարաբերությունները Ասորեստանի հետ, նրա տեսակարար կշիռը շրջակա երկրների մշակույթի ասպարեզում և առանձնապես խոշոր դերը հայ մշակույթի ու տնտեսության, էթնոսի ձևավորման ասպարեզում։ Սրանք պրոբլեմներ են, որոնք կանգնած են մեր պատմության բուն ակունքների մոտ և պահանջում են պատմագիտական լուրջ վերաբերմունք ու տասնյակ տարիների ջանքեր։ Անհրաժեշտ է շարունակել ուրարտագետ կադրերի պատրաստումը, խորացնել և ավելի բազմակողմանի դարձնել Ուրարտուի ուսումնասիրությունը։ Հայաստանում նախնադարյան համայնական կարգերի և վաղ ստրկա-

---

[19] C. A. Burney, Urartian Fortresse and Town in the Van region („Anatolian Studies", 1957, № VII), C. A. Burney and G. R. Lawson, Measured plans of urartian fortresses („Anatolian Studies", 1960, № X).

[20] W. Kleiss, Ausgrabungen in der Festung Bastam 1969, Archaeologische Mitteilungen aus Iran, Berlin, 1970, № 3.

տիրական պետական կազմավորումների ծագման ու զարգացման օրինաչափությունների բացահայտումը սովետահայ հնագիտության մեծ ներդրումն է ՍՍՀՄ ժողովուրդների հնագույն պատմության և Առաջավոր Ասիայի անդրանիկ բաղաքակրթությունների ուսումնասիրության ասպարեզում։

Այդ հանգամանքը պարտավորեցնում է Հայաստանում կատարվող աշխատանքները բարձրացնել ավելի պատշաճ մակարդակի թե՛ պեղումների ինտենսիվության, գիտական մեթոդիկայի, տեմպի, թե՛ ուսումնասիրությունների լայն ընդգրկման ու խորության, թե՛ բնական ու ճշգրիտ գիտությունների հասույթների կիրառման տեսակետից։

Ցավոք, սովետահայ հնագիտությունը մնում է տեխնիկապես քիչ զինված։ ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը և Հայաստանի պետական պատմական թանգարանը նույնիսկ չունեն նյութերի վերականգնման լավ արհեստանոցներ։ Անհրաժեշտ է ստեղծել ժամանակակից միջոցներով հագեցված այնպիսի նորատիպ լաբորատորիաներ, որտեղ հնարավոր լինի բազմակողմանիորեն ուսումնասիրել նյութերի ֆիզիկո-քիմիական հատկանիշները, նրանց պատրաստման տեխնոլոգիական եղանակները, զանազան անալիզների միջոցով հասնել փայտածխի, ոսկորի, թրծված կավի, քարի և այլ նյութերի հնարավոր ճշգրիտ թվագրությանը։ Նախնադարյան և վաղ ստրկատիրական տնտեսության պրոբլեմները պարզաբանելիս անհրաժեշտ է լայնորեն կիրառել բնակավայրերի հետախուզման պալեոմագնիսական մեթոդը, հացարույսերի, ծառերի ու ծաղկեփոշու ուսումնասիրման հայտնի կենսաբանական մեթոդները։ Պետք է ավելի լայնորեն կիրառել սպեկտրալ ու մետաղագրական անալիզի արդյունքները։ Պետք է նոր մակարդակի հասցնել պալեոկլիմայական և պալեոնթոլոգիական ուսումնասիրությունները։

ИЗУЧЕНИЕ ДРЕВНЕЙШЕЙ КУЛЬТУРЫ АРМЕНИИ И ПЕРСПЕКТИВЫ ЕГО РАЗВИТИЯ

А. А. МАРТИРОСЯН
Доктор исторических наук

Резюме

Советская армянская археологическая наука добилась значительных успехов в изучении культуры первобытного общества и раннеклассового государства Урарту, что позволяет выявить возможные пути перспективного развития археологических изысканий по проблематике антропогена, становления человеческого общества, возникновения и развития основных отраслей хозяйства, оформления первобытной идеологии и искусства, урартского искусства и религии, возникновения металлургии и металлообработки и множества других ремесел.

Перспективное развитие археологических работ на территории Армении необходимо рассматривать в теснейшей связи с научной проблематикой по Древнему Востоку, Восточному Средиземноморью, Эгейскому миру, Кавказу и южным районам СССР.